«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

23 հուլիսի 2021թ. N 51 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ՝ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 5.1.4 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի՝ պարզեցված կարգով որակավորման (որակավորման վկայականի) տրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Պալատի խորհրդի 2021 թ. հունիսի 23-ի N 45-Լ որոշումը համարվում է անվավեր:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. հուլիսի 23-ի N 51 - Լ որոշման

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ՝ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ՏՐՄԱՆ

Բովանդակություն

1 Ընդհանուր դրույթներ 3
2 Որակավորումը 4
3 Որակավորման կարգը 5

1 Ընդհանուր դրույթներ

1.1.1 «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի՝ պարզեցված կարգով որակավորման (որակավորման վկայականի) տրման կարգը (այսուհետ՝ Պարզեցված կարգ) սահմանվում է ի կատարումն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերի և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 5.1.4 կետի պահանջների:

1.1.2 Սույն կարգով կարգավորվում են Պալատի կողմից Պարզեցված կարգով աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման (որակավորման վկայականի) տրման հետ կապված հարաբերությունները:

1.1.3 Պարզեցված կարգով Պալատի աուդիտորի որակավորման (որակավորման վկայականի) ստացման համար կարող են դիմել Պալատի անդամ հանդիսացող և «Աուդիտորական գործունեության մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորի որակավորման վկայական ունեցող աուդիտորները՝ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:

1.1.4 Պարզեցված կարգով Պալատի փորձագետ հաշվապահի որակավորման (որակավորման վկայականի) ստացման համար կարող են դիմել՝

1) Պալատի անդամ հանդիսացող և «Հաշվապահական հաշվառման մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն հաշվապահի որակավորման վկայական ունեցող անձինք՝ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը,

2) Պալատի անդամ հանդիսացող և ՀՀ կենտրոնական բանկի տված՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի և ապահովագրական բրոքերային կազմակերպությունների հաշվապահի որակավորման վկայականներ ունեցող անձինք՝ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը, և

3) «Աուդիտորական գործունեության մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն, ՀՀ կառավարության սահմանած կարգով հավատարմագրված մասնագիտացված կառույցի այն անդամները, որոնց «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնագիտացված կառույցի սահմանած կարգով տրվել է սահմանափակ ժամկետով փորձագետ հաշվապահի որակավորման վկայական՝ մինչև 2023 թվականի հունվարի 1-ը:

1.1.5 Աուդիտորի և փորձագետ հաշվապահի՝ Պարզեցված կարգով որակավորումն իրականացվում է որակավորման քննությունների միջոցով:

1.1.6 Պարզեցված կարգով աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրերը (ներառյալ՝ քննական առարկաների կազմը) սահմանված է ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագիրը (այդ թվում՝ քննական առարկաների կազմը) և որակավորման քննությունների անցկացման կարգը հաստատելու մասին» Պալատի խորհրդի 2021 թվականի մարտի 24-ի N 14-Լ որոշմամբ:

1.1.7 Որակավորման քննությունները կազմակերպում և անցկացնում է Պալատը:

1.1.8 Որակավորման գործընթացն իրականացնում է Պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Որակավորման հանձնաժողով):

1.1.9 Որակավորման (որակավորման վկայականի) տրամադրումն իրականացվում է Պալատի խորհրդի որոշմամբ՝ Որակավորման հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:

1.1.10 Աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորումները տրվում են անժամկետ:

1.1.11 Պարզեցված կարգով աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու հետ կապված այն հարցերը, որոնք կարգավորված չեն սույն կարգով, կարգավորվում են Պալատի խորհրդի 2021 թվականի փետրվարի 17-ի N 9-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման տրման կարգով (այսուհետ՝ Որակավորման կարգ):

2 Որակավորումը

2.1.1 Պարզեցված կարգով աուդիտորի որակավորումը տրվում է այն դիմողին, ով անցողիկ միավորներով հանձնել է աուդիտորների որակավորման քննությունների ծրագրով նախատեսված 5-րդ, 6-րդ և 7-րդ առարկաների քննությունները: Ընդ որում, դիմողը ազատվում է աուդիտորների որակավորման քննությունների ծրագրով նախատեսված 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ առարկաների քննություններից:

2.1.2 Պարզեցված կարգով փորձագետ հաշվապահի որակավորումը տրվում է այն դիմողին, ով անցողիկ միավորներով հանձնել է փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների ծրագրով նախատեսված 5-րդ և 6-րդ առարկաների քննությունները: Ընդ որում, դիմողը ազատվում է փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների ծրագրով նախատեսված 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ առարկաների քննություններից:

2.1.3 Քննությունները համարվում են անցողիկ միավորներով հանձնված, եթե դիմողը ստացել է տվյալ առարկայի համար նախատեսված միավորների 50 տոկոսը կամ ավելին:

2.1.4 Պարզեցված կարգով որակավորում ստանալու նպատակով դիմած անձը սույն կարգի 2.1.1 կամ 2.1.2 կետերով նախատեսված քննություններից ազատման համար վճարում է յուրաքանչյուր առարկայի քննության վճարը՝ ազատումը շնորհելու պահին գործող չափով: Ազատումներ ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ազատված յուրաքանչյուր առարկայի քննության վճարը վճարված չլինելու դեպքում՝ Որակավորման հանձնաժողովի ազատման վերաբերյալ որոշումը համարվում է անվավեր:

2.2 Աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների անցկացումը

2.2.1 Աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման քննություններն անցկացնում է Որակավորման հանձնաժողովը:

2.2.2 Որակավորման քննություններն անցկացվում են Պալատի խորհրդի 2021 թվականի մարտի 24–ի N 14–Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների անցկացման կարգի համաձայն:

3 Որակավորման կարգը

3.1.1 Դիմողը, ով Պարզեցված կարգով աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում (որակավորման վկայական) ստանալու համար դիմել է Պալատին, պետք է ծանոթանա Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի՝ պարզեցված կարգով որակավորման (որակավորման

վկայական) տրման սույն կարգին, Որակավորման կարգին, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների անցկացման կարգին, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրին, ինչպես նաև Պալատի ներքին իրավական այլ ակտերին, որոնք վերաբերում են Պալատի կողմից աուդիտորների կամ փորձագետ հաշվապահների որակավորմանը: Նշված փաստաթղթերը տեղադրված են Պալատի պաշտոնական կայքում՝ www.aaaa.am:

3.1.2 Պարզեցված կարգով Պալատի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում (որակավորման վկայական) ստանալու համար դիմողը ներկայացնում է

1) դիմում (կարգի հավելված). ■

2) երկու լուսանկար 3x4 չափի ■

3.1.3 Պալատի աշխատակազմը դիմողի դիմումը Պալատ մուտքագրվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Որակավորման հանձնաժողովին է ներկայացնում դիմումատուի վերաբերյալ տեղեկանք՝ քննությունները հանձնած լինելու, ինչպես նաև ազատված առարկաների գծով քննության վճարը վճարած լինելու վերաբերյալ:

3.1.4 Որակավորման հանձնաժողովը սույն կարգի 3.1.3 կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկություն է ներկայացնում Պալատի խորհրդին՝ դիմողին որակավորում տալու կամ որակավորում չտալու վերաբերյալ:

3.1.5 Պալատի խորհուրդը, Որակավորման հանձաժողովի առաջարկությունը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում՝ դիմողին որակավորում տալու կամ որակավորում չտալու վերաբերյալ:

3.1.6 Դիմողը համարվում է որակավորված՝ որակավորման վերաբերյալ Պալատի խորհրդի որոշման ամսաթվից:

3.1.7 Պալատի կողմից դիմողին որակավորում չտալու վերաբերյալ որոշումը գրավոր ուղարկվում է այդ դիմողին՝ որոշման ընդունման ամսաթվին հաջորդող օրվանից սկսած՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի հավելված

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
որակավորման հանձնաժողովին

դիմող _____
_____ կողմից
անուն, հայրանուն, ազգանուն

հաշվառման (գրանցման) հասցեն՝

_____

_____

անձնագրային տվյալներ

_____

_____

Դիմում

Խնդրում եմ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի՝ պարզեցված կարգով որակավորման (որակավորման վկայականի) տրման կարգով ինձ տալ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի/փորձագետ հաշվապահի[1] որակավորում:

Ներկայումս ունեմ[2]՝

- «Աուդիտորական գործունեության մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորի որակավորման վկայական, որի գործողության ժամկետը չի լրացել,
- «Հաշվապահական հաշվառման մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն հաշվապահի որակավորման վկայական, որի գործողության ժամկետը չի լրացել,

---

1 Եթե դիմողը դիմել է աուդիտորի որակավորում ստանալու համար, «փորձագետ հաշվապահ» բառերը ջնջում է: Եթե դիմողը դիմել է փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար, «աուդիտոր» բառը ջնջում է:

2 Թողնել այն պարբերությունը, որին դիմորդը բավարարում է:

- ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված հաշվապահի որակավորման վկայական, որի գործողության ժամկետը չի լրացել,
- «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության կողմից տրված սահմանափակ ժամկետով փորձագետ հաշվապահի որակավորման վկայական, որի գործողության ժամկետը չի լրացել:

Հավաստում եմ, որ՝

- անցողիկ միավորներով հանձնել եմ աուդիտորների/փորձագետ հաշվապահների՝ պարզեցված կարգով որակավորում ստանալու համար որակավորման քննությունների ծրագրով նախատեսված ներքոթվարկյալ քննական առարկաների գծով որակավորման քննությունները՝
  - .

  ...
  - .

Կից՝ երկու լուսանկար 3x4 չափի:

« » _____ 20 թ. _____

Ամսաթիվ Ստորագրությունը